Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

115

90
U-50

G. 1881

375.9
Ս-50

ԾՐԱԳԻՐ

ԵՒ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ԱՂԻՍԱԿ

ԸՆԴՀԱՆՈՒՔ Ի ԱՂՓՅԷՆ ՊՊՄՈՒԵԱՆ.

ՀԱՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ,

ՀԻՆ ԴԱՐ

Աշխատասիրեցին

ՍԻՄԷՕՆԵԱՆ—ՄԵԼԵԱՆ

ԵՐԵՒԱՆ

«ՊՍԱԿ» ԼՐԱԳՐԱՏՊԱՐԱՆ

1881

Դ 012

9(ա)
Ա-50

ԾՐԱԳԻՐ

ԵՒ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ԱՂԻՒՍԱԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿՐԿՆՈՒԹԵԱՆԸ
ՕԺԱՆԳԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ

36285
Ա007
32559

ՀԻՆԳԱՐ

Աշխատասիրեցին

ՍԻՄԷՕՆԵԱՆ — ՄԵԼԵԱՆ

ԵՐԵՒԱՆ

„ՊՍԱԿ“ ԼՐԱԳՐՈՒ ՏՊԱՐԱՆ

1880

2004

ՍՍՀ. ՀԱՅԿԱԿԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ — ССРА
им. А. Мраморяна
Ա. ՄԱՐՄԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

8382

Дозволено Цензурою. 22 Октября 1880 г.
Тифлисъ.

Типографія газеты „ПСАКЪ“.

Առաջաբան մեր

Մեր այս դիւրալիր և ժամանակագրական աշխատակ ընդհանուր և ազգային պատմութեան վերնագրով աշխատութիւնը իբրև օժանդակ կարող է հանդիսանալ թէ ուսուցիչներին դասաւանդութեան ժամանակ և թէ աշակերտներին կրկնութեան ժամանակ։

Ընդհանուր և Հայոց պատմութեան ժամանակակից նշանաւոր անցքերը կցել ենք միմեանց հետ։ Նաև Հայոց պատմութեան ծրագիրը գրել ենք միւս ազգերի պատմութիւններից համեմատաբար, աւելի ընդարձակօրէն։

Հետևել ենք պ. Ս. Գորբաչովի օրինակին, որը շատ տարածուած է պետական ուսումնարաններում։

Ս.—Մ.

ՀԻՆ ԴԱՐ

I

Եգիպտացիք.

Ն. Ք. Ծ.

3000. Եգիպտոսի ամենահին Փարաւոն Մենէսը հիմնում է Մեմֆիս քաղաքը։

3000—2400. Քէօփս, Քեփրէն և Միւկերինոս Փարաւոնները կառուցանում են երեք ամենամեծ բուրգերը։

2200. Մերիս թագաւորը, որի ժամանակ շինվում է Մերիսեան լիճը և Լաբիւրինթոսը։

2100—1600. Արաբական ամառգառներում թափառող Հիւքսոս ցեղերի տիրապետութիւնը Եգիպտոսում։ Թեբէի Փարաւոն Տուտմոսէսը հալածում է Հիւքսոսներին։

1600—1200. Եգիպտական Տէրութեան փառքն ու մեծութիւնը։ Այն ժամանակուայ հարուստ դուռ Թեբէ մայրաքաղաքը և նորա հոյակապ շինութիւնների ճարտարապետութիւնը։

1396—700. Սամուէլ Բ. Միսամոնի կամ Նասոսա՝ մեծի աշխարհակալութիւնները։ Եթովպացոց ազգերը Եգիպտոսց և երկոտասանների իշխանութիւնը։

670—616. Սայիսեան Փսամմետիքոս թագաւորը և Եգիպտացոց յարաբերութիւնը Փլենիկեցոյ և Ցունաց հետ։

616—600. Նեքաուով Փարաւոնը Եգիպտոսում կազմակերպում է նաւատորմիղ։ Նա մտադրվում է Սև ծովը միացնել Միջերկրականի հետ։

570—526. Փարաւոն Ամասիսը։

525. Պարսից Կամբիւսէս թագաւորը յաղթում է Պելուսիոնի մօտ Փսամմենիտ վերջին Փարաւոնն և նուաճում Եգիպտոսը։

331. Ալէքսանդր Մակեդոնացին նուաճում է Եգիպտոսը։

323—31. Պտղոմէոսեան թագաւորական ցեղը Եգիպտոսում։

31. Եգիպտոսը՝ Հռոմէական նահանգ։

II

Հայերը

Դ. Բ. Ա.

2350—330. Հայկազանց Իշխանութիւն

2350—1300. Նոյի թոռան Թոգի՝ Թորգոմի որդի մեր Հայկ Նահապետը՝ Բաբէլի աշտարակաշինութենից յետոյ իւր 300-ի չափ մարդկերանցով Միջագետքից գալիս է բնակվում մի լեռնոտ երկրում, որ և անուանվում է Հայաստան, իսկ բնակիչները՝ Հայեր։ Այդտեղ՝ Բզնունեաց ձորի մոտերքում՝ ճակատամարտում է Բէլի հետ. սպանում է նորան և ոչնչով հաստատում է Հայկեան կամ Հայկազանց Իշխանութիւնը։ Հայկի մահից յետոյ յաջորդաբար կառավարում են՝ Արմենակ (Արտաշատ), Արմենիա (Արմաւիր), Ամասիա և Շարայ որդին (Մասիս, Փառոսոտ, Յոլսկերտ), Գեղամ և Սիսակ որդին (Գեղամայ լեռ) Հարմայ, և տպա Արամ։

1300—1200. Արամը իւր նախորդներից ստացած երկիրը ընդարձակում է. Հայաստանը մաքրում է ասորստանցիներից. սպանում է Հայրենեաց թշնամի Նիւքեար Մադէս Մարաց իշխանին. Ասորոց Բարշամ իշխանին. հալածում է Պայապ և Քալեայ Կապադովկացուն. հրամայում է տմ

տեղ հայերին խօսել. Նինոս Բաբիլացոյ թագաւորի հետ բարեկամութեան դաշն է կապում և նրանից սատնում մարգարտեայ վարսակալ կրելու իրաւունքը: Օտարները Արամի անունով մեր երկիրը անուանում են Արմենիա — իսկ մեզ՝ Արմենացի: Արամին յաջորդում է իւր որդի Արայ գեղեցիկը: Սա ապանվում է Ասորոյ Նաւիրամ թագուհու հետ ունեցած պատերազմում, որից յետոյ Հայաստանը դառնում է Ասորեստանի մի նահանգ: (Աջայ Արայեան կամ Կարդոս, Անուշաւան — Սօսանուէր և այլն):

1200. Յարմայր նահապետը Ասորեստանի Տեւտամոս թագաւորի կողմից Եթովպացի զօրայ հետ Տրոյադայի Պրիամոս թագաւորին օգնութիւն դնալով՝ շատ քաջագործութիւններից յետոյ՝ ապանվում է Աքիլլէսից:

640. Պարոյրը Մարայ Կիաքսար թագաւորի դաշնակցութեամբ յաղթում է Ասորեստանի Սարատանապալ թագաւորին. սատնում է անկախութիւն և պսակվում է ալքայական թագով և այսպէս՝ լինում է Հայկազանց իշխանութեան պսակակիր առաջին թագաւորը:

600. Պարոյրի յաջորդ Հրաչեան ու Բաբիլացոյ Նաբուզոդոնոսոր թագաւորը դաշնակցութեամբ առնում են Երուսաղէմը: Շատ գերիներ են վերցնում, որոնց միջից Հրաչեան իւր հետ բերում է Հայաստան Շամբատ անունով մեծ իշխանին, որից և շառաւիղում է Բագրատունեաց մեծ նախարարութիւնը:

570. Երուանդեան Տիգրան Ա. ընդարձակում, բարգաւաճում և ծաղկեցնում է Հայաստանը. միանալով պարսից Կիւրոս թագաւորի հետ, սպանում է Մարաց Աժդահակ թագաւորին և 10000-ի չափ գերի է վարում Հայաստան, որոնց հետ և Աժդահակի Անոյշ առաջին կինը (վիշապների մայր), դորանից սերվում է Մուրացան կամ Մարաց նախարարութիւնը. Կիւրոսի դաշնակցութեամբ կործանում է Բաբիլոնը, ինչպէս և 100 տարի առաջ գուշակել էր Երեմիա մարգարէն:

520. Տիգրանին յաջորդում է Հերակլէսի նման քաջագործ Վահագնը, որին Պոնտացիք և Վրացիք արձան կանգնեցնելով՝ Աստուծոյ տեղ էին պաշտում և Գողթան երգիչները նորա քաջութիւնները երգում: Վահագնից յառաջանում է Վահունեաց նախարարութիւնը:

330. Վահէն՝ Հայկազանց վերջին թագաւորը՝ Պարսից Դարեհ թագաւորին օգնութիւն է ուղարկում Ալէքսանդր Մակեդոնացու դէմ. ինքը անձամբ ճակատում է Ալէքսանդրի հետ, սպանվում է և

Հայաստանը Մակեդոնական նահանգ դառնալով վերջանում է Հայկազանց իշխանութիւնը։

330—146. Կուսակալների իշխանութիւնը։

Ն.Ք.Ծ. Ք.Ծ.Ց.

150—428. Արշակունեաց Հարստութիւնը։

150. Երբեմն Մակեդոնացի և երբեմն Հայ կուսակալներով (Արտաշէս, Արտաւազդ) կառավարվելուց յետոյ՝ Հայաստանում սկսվում է Արշակունեաց հարստութիւնը Պարթևների Արշակ Մեծի եղբայր՝ Վաղարշակի գահակալութեամբ։ Վաղարշակը ապահովացնում է զէնքով իւր երկիրը. ներքին կարգադրութիւններով բարգաւաճում է աշխարհը. հիմնում է նախարարական կազմակերպութիւնը (Բագրատունի, Գնունի, Մուրացան, Խորխոռունի, Արծրունի, Հաւնունի և այլն). իսկ իւր գործերի սպակն է լինում Մար—Արաս Կատինայի ձեռքով՝ Նինուէի մատենադարանից Հայոց պատմութիւն գրել տալը։ Սրան յաջորդում է իւր որդի Արշակը (պատերազմ ընդդէմ Պոնտացոց)։

115. Աշխարհակալ Արտաշէս Առաջինը ընդարձակում է Հայաստանը. խլում է Պարթևներից Նախաղահութիւնը. իւր անունով դրամներ է

կտրել տալիս. անթիւ ու անհամար զօրքերով Փոքր Ասիային տիրելուց յետոյ՝ արշաւում է Ցունաստան՝ այստեղից ուղարկում է կուռքերի բազմաթիւ արձաններ. մոռդրվում է արշաւել և Եւրոպան, բայց զօրքերի մէջ խռովութիւն ծագելով՝ տպանվում է։

90. Արտաշէս՝ Աշխարհակալին յաջորդում է իւր որդի «Արքայից Արքայ» Տիգրանը. Ատրեստանը, Բաբելաստանը, Պալեստինը արշաւելով՝ առնում է Սելևկեան թագը և Ասիայի ամենամեծ թագաւորն է դառնում. նուաճում է Պարթեւաստանը, տիրում է Կիլիկիային, Կապադովկիային և Գալատիայի մեկ մասին. յաղթվում է Տիգրանակերտի մօտ Լուկուլլոսից՝ և Պոմպէոսի հետ կտրած դաշինքով՝ հրաժարվում է Հայաստանից դուրս գտնուած երկրներից։

36. Տիգրանին յաջորդում է նորա որդին Արտաւազդ. Անտոնիոսի դաւաճանութեամբ տպանվում է Կլէոպատրայից և Հայաստանը դառնում է Հռոմէական նահանգ։

33. Մի քանի Հայ նախարարներ հիմնում են Միջագետաց թագաւորութիւնը (Եդեսիա)։ Այստեղ առաջին թագաւոր լինում է Արշամ, որ հարկ տալ խոստանալով՝ հաշտվում է Հռոմայեցոց հետ։

Ք.Ծ.Ց.

3—65. Արշամի որդի Աբգարը։ Դրա ժամանակ ծնվում է աշխարհիս Փրկիչ Յիսուս Քրիստոսը, Որի դաստառակը բերվում է Եդեսիա քաղաքը։ Աբգարի նամակը։ Թադէոս առաքեալի քարոզութեամբ՝ քրիստոնէութեան լոյսը առաջին անգամ ծաւալվում է Հայաստանում։ Աբգարը Պարսկաստանի Արշաւիր Թագաւորի ժառանգներին հաշտեցնում է. նամակներ է գրում Հռոմէացոց Տիբերիոս Կայսրին, Ասորեստանի Ներսեհ և Պարթեւաց Արտաշէս Թագաւորներին, որոնց խնդրում է թոյլ տալ ազատ տարածվելու քրիստոնէական կրօնը իրանց տէրութիւնների մէջ։ Նրան յաջորդում են՝ Անանուն, Սանատրուկ, որ հալածում է քրիստոնեաներին և նահատակել է տալիս իւր դուստր Սանդուխտին և Թադէոս առաքեալին։

65. Սանատրուկի յաջորդներին ջնջելով՝ (ազատվում է Արտաշէս մանուկը) թագաւորում է Երուանդը. կառուցանում է Երուանդակերտ, Երուանդաշատ և Բագարան քաղաքները։ Ցաղթվում է Ախուրեան գետի մօտ Սանատրուկի որդի Արտաշէսից (Սմբատ Բագրատունի)։

85—213. Թագաւորում է Արտաշէսը Պարսից Դարեհ Թագաւորի օգնութեամբ. նորոգում է Արտաշատ քաղաքը. պատերազմում է Ալանների

հետ, յաղթում է և նրանց թագաւորի Սաթենիկ աղջկայ հետ սմուտանում։ Կասպեան ազգերի ապստամբութիւնը գսպում է Սմբատ նախարարի առաջնորդութեամբ. պատերազմում և հաշտութեան դաշն է կապում Հռոմայեցոց Տրայանոս Կայսեր հետ. բարեկարգում է Հայաստանը. ծաղկեցնում է երկրագործութիւնը, վաճառականութիւնը և արուեստները։ Յաջորդներն են՝ Արտաւազդ, Տիրան Ա. Տիգրան Գ. Վաղարշ, որ պարսպապատում է Վարդկէս աւանը և իւր անունով անուանում է Վաղարշապատ. շինում է Վաղարշաւան մեծ աւանը. պատերազմում է Խազրաց և Բասլաց ազգերի հետ— հալածում է նրանց. սպանվում է։

213. Թագաւորում է Խոսրով Ա.. հալածում պարսիկներին Հայաստանից և ինքն էլ զոհ է գընում Պարսից Սասանեան ցեղի դաւաճանութեանը Անակի ձեռքով և իւր երկիրը դառնում է Պարսկաստանի մի նահանգ։ (Տրդատի փախուստը)։

286. Տրդատը Հռոմէական լեգիոններով դառնում է Հայաստան. հալածում է Պարսիկներին. Գրիգորին գցել է տալիս Արտաշատի խոր վիրապը. նահատակել է տալիս Հռիփսիմեանց կոյսերին. ընդունում է քրիստոնէութիւնը և օժանդա-

կում է քրիստոնէութեան տարածմանը Գրիգոր Լուսաւորչու ձեռամբ Հայաստանի մէջ. միասին կառուցանում են Հռիփսիմեանց վկայարանները, Էջմիածինը։ (Գրիգոր Լուսաւորիչը՝ առաջին Հայրապետ) Ցրդատը թիւնաւորվում է նախարարներից։

343—400. Խոսրով Բ.։ Տիրան Բ.։ Արշակ Բ. որի թագաւորութեան միջոցում Վաղէսի օգնութեամբ հալածվում են պարսիկները։ Թէոդոս Կայսրը Ներսէս Մեծի աղերսանքով՝ թագաւոր է դընում Պապին։ Մեհրուժանի ուրացութիւնը և հրաշէկ շամփուրով պսակվելը Սմբատ Բագրատունու ձեռքով։ Մեծն Ներսէսի մեծագործութիւնները։ Վարազդատ։ Հայաստանը բաժանվում է Պարսիկների և Յոյների մէջ։ Արշակ Գ.՝ և Վաղարշակ Բ.ը թագաւորում են ամեն մինը մի մասում։ Խոսրով Գ. իւր իշխանութեան տակ միացնում է երկու բաժանուած մասերը, թշնամանում է Պարսից Շապուհ թագաւորի հետ և բանդարկվում է Անյուշ բերդում։

400. Վռամշապուհի խաղաղ թագաւորութիւնը։ Հայկական նշանագրերի գիւտը։ Մեսրոպը և Սահակ թարգմանիչները, որոնց ձեռքով ծաղկում է մեր մատենագրութիւնը։ Խոսրովի կրկին սնդամ թագաւորելը։ Արտաշէս Գ. վերջին թա-

գաւորը, որից հայ նախարարները ձանձրացած՝ Վռամից Պարսիկ մարզպան են խնդրում։

428. Արշակունեաց հարստութեան անկումը։

430. Մարզպանների իշխանութիւնը։ Հայաստանը՝ թշուառութիւնների ասպարէզ։ Կրօնական հալածանք։ Վռամի յաջորդ ցաղկերտը քրիստոնէութեան դէմ պատերազմ է հրատարակում.

439. Ս. Սահակ Պարթեւը վաղճանում է։

440. Ս. Մեսրոպ վաղճանում է։

441. Հայոց զօրքերը Հայաստանից ուղարկվում են Հոների դէմ պատերազմ. մեր Հայրենիքը մնում է անպաշտպան և հալածանքը աւելանում։

445. Վասակ Սիւնին նշանակվում է մարզպան Հայաստանի։

449. Հայաստանի նոր մարզպան Դենշապուհը եկեղեցիների վերայ հարկէ դնում, կրօնաւորներին ցրվում, հարկերը կրկնապատկում. հոգեւոր և աշխարհական առաջնորդները պարսից արքունիքն են կանչվում և բանտարկվում։

449. Մի քանի հաւատուրացների հետ բազմաթիւ մոգպետներ են Հայաստան ուղարկվում։ Հասարակ ժողովուրդը զինվում է և դրանց հալածում։ Նախարարները, բացի Վասակից, գնում են և նորից միմեանց հետ միանում։

450. Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ

Հայոց զօրքը Աղուանից երկիրն է մտնում և Կուր գետի մօտ՝ պարսից Սեբուխտ զօրապետին ջարդում։

451. Վարդան Մամիկոնեան քաջ սպարապետը։ Աւարայրի ճակատը Արտազու գաւառում՝ Տղմուտի եզերքում։ Կրօնի և ազգութեան պաշտպանների նահատակները։ Հայաստանի վիճակը՝ Վարդանանց պատերազմից յետոյ։

453. Ղևոնդեանց նահատակութիւնը։ Եղիշէ պատմաբանը։

III

Փիւնիկեցիք

2000. Փիւնիկեցիք հին ժամանակներում համաշխարհային վաճառականութիւն վարող առաջին ազգն էին համարվում։ Նրանց են վերաբերում այբուբենի, թուանշանների, ապակու և ծիրանի ներկի գիւտերը։ Վերոյիշեալ թուերում նրանք հիմնում են Միջերկրական ծովի արևելեան ափերում Սիդոն, Տիւրոս, Արգոս, Տրիպոլիս և շատ ուրիշ քաղաքներ։ Իւրաքանչիւր քաղաք ունէր իւր առանձին թագաւորը։ Այդ քաղաքները միմեանց պաշտպանում են դաշնակցութեամբ։

888. Տիւրոսի Պիգմալիոն թագաւորի քոյր Դիդոնան Ափրիկայի հիւսիսային ափերում հիմնում է Կարքեդոն քաղաքը, որ իւր զօրութեամբ գերազանցում է Տիւրոսին. նուաճում է Ափրիկայի ափերում գտնուած Փիւնիկեան միւս գաղթականութիւնները, և իշխում է հարեան բնիկ ցեղերին. տիրապետում է Միջերկրական ծովի կէս մասին (Սարդինիա, Կորսիկա, Սպանիա և Սիկիլիայի արևմտեան մասը)։ Հռոմէացոց հետ ունեցած անյաջող պատերազմները։

722. Փիւնիկեան քաղաքների հարստութիւնները շատ աշխարհակալների են հրապուրում։ Ասորոց Սալմանասար թագաւորը, բացի Տիւրոսից, նուաճում է ամբող Փիւնիկէն։

600. Եգիպտոսի Նեքաւով Փարաւոնի յանձնարարութեամբ Փիւնիկեցիք պատումն Ափրիկայի շուրջը։

586. Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը տասներեքամեայ պաշարումից յետոյ, նուաճում և աւերում է Տիւրոսը. ժողովրդի ազատուած մասը գաղթելով մերձակայ կղզին՝ հիմնում է նոր Տիւրոս, որ յետոյ հնից աւելի է հռչակվում։

332. Ալէքսանդր Մակեդոնացին նուաճում է նոր Տիւրոսը, որից յետոյ ընկնում է Փիւնիկեան վաճառականութիւնը. Ալէքսանդրը հիմնում է Նեղոս գետի բերանում Ալէքսանդրիա քաղաքը,

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ — СССР
им. А. Мраванкяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1007
32559
36235

ուր և կենտրոնանում է վաճառականութիւնը։

IV

Հրէաներ.

2000. Հրէից ազգի առաջին նախահայր և նահապետ Աբրահամը տեղափոխվում է Միջագետքից Քանանացոց երկիրը։

1625. Մովսէս հանում է հրէաներին Եգիպտոսից։

1585. Հրէաները Յեսու Նաւեայի առաջնորդութեամբ մտնում են Պաղեստին և բաժանում են երկիրը Յակոբի տասներկու ցեղերի վերայ։

1585—1096. Դատաւորների ժամանակը (Գեդէոն, Դեբովրա, Սամսոն)։

1096—1056. Սաւուղ՝ հրէից առաջին թագաւորը։

1056—1016. Դաւթի թագաւորութիւնը և հրէական ազգի փառքն ու մեծութիւնը։

1016—976. Սողոմոն թագաւորը և Երուսաղէմի տաճարի շինութիւնը։

976. Հրէական ազգի երկու մաս բաժանուիլը, մինը Յուդայի թագաւորութիւն՝ Ռոբովամի իշխանութեամբ՝ Երուսաղէմ քաղաքով և միւսը Իսրայէլի թագաւորութիւն Յերոբովամի իշխանութեամբ՝ Սամարիա քաղաքով։

722. Ասորոց Սալմանասար թագաւորը կործանում է Իսրայէլի թագաւորութիւնը և գերի է վարում ժողովուրդը դէպի Ասորեստան։ Ոչիա՝ վերջին թագաւորը։

586. Բաբելացոց Նաբուգոդոնոսոր թագաւորը նուաճում է Յուդայի թագաւորութիւնը, կործանում է Երուսաղէմը և ժողովուրդը գերի է վարում։ Նաբուգոդոնոսորի հետ էր և մեր Հրաչեայ թագաւորը։ Վերջին թագաւոր Սեդեկիա։

538. Բաբիլոնի նուաճումից յետոյ, Պարսից Կիւրոս թագաւորը հրաման է տալիս Յուդայի ազգին կրկին վերադառնալ Պաղեստին։ Նրանք վերադառնում են՝ նախ Զօրաբաբէլի առաջնորդութեամբ, յետոյ Եզրի (478) և վերջը Նէեմայի առաջնորդութեամբ (444)։

332. Հրէաստանը ընկնում է Ալէքսանդր Մակեդոնացու իշխանութեան տակ։ Նորա մահից յետոյ դառնում է Սելևկեան միապետութեան մի մասը։

167. Հրէաները Մատաթեայ քահանայի և նորա հինգ որդիների առաջնորդութեամբ թօթափում են Ասորոց լուծը և ստանում են անկախութիւն։

140. Յուդայ Մակաբէի Սիմոն եղբայրը դառնում է

ժառանգական իշխան և քահանայապետ Յուդայի ցեղին։

63. Հռոմայեցոց Պոմպէոս զօրապետը Հրէաստանը միացնում է հռոմէական պետութեան հետ, թէև թողնում է այնտեղ Մակաբէ ցեղի բնիկ իշխաններին։

37. Հերովդէս Զորրորդապետը Հռոմայեցոց հովանաւորութեամբ գահընկէց է անում Մակաբայեցոց և ընդունում է թագաւորի տիտղոսը։ Դորա ժամանակ ծնվում է Յիսուս Քրիստոսը։

Ք. Ծ. Ե.

44. Հռոմայեցոց Կլաւդիոս Կայսրը Պալեստինը դարձնում է հռոմէական նահանգ և կառավարութիւնը յանձնում է հռոմէական կուսակալներին (procurator)։

65—70. Հրէաստանը ապստամբում է հռոմէական կայսերութեան դէմ։

70. Տիտոսը առնում և կործանում է Երուսաղէմը։

135. Հռոմէացիք նուաճում են հրէաների նոր ապըստամբութիւնը։ Հրէաները ցիրուցան են լինում զանազան կողմեր. Հրէաստանը ամայանում է։

V

Մարք և Պարսիկք.

. . Մարաստանը բաժանվում է Ասորեստանից։

708—655. Դիոկ՝ Մարաց թագաւորը՝ հիմնում է Եկբատան ամրոցը — Մարաստանի մայրաքաղաքը։

655—633. Փրաւորտը նուաճում է Պարսկաստանը։

633—593. Կիաքսարը և նորա պատերազմը Սկիւթացոց հետ։

560. Պարսից Կիւրոս թագաւորը դաշնակցութեամբ Հայոց Երուանդեան Տիգրանի յաղթում է Մարաց Աժդահակ թագաւորին, տիրապետում է Մարաստանը և հիմնում է Ասիայի մէջ պարսկական միապետութիւնը։

548. Կիւրոսը նուաճում է Լիւդացոց տէրութիւնը և գերում է նրանց Կրէսոս թագաւորին։

538. Կիւրոսը նուաճում է Բաբելաստանը և նորա բոլոր հպատակ ազգերին։

529. Կիւրոսի մահը։

529—522. Կամբիւսէսը՝ Կիւրոսի որդին և յաջորդը։

525. Պելուսիոնի ճակատամարտը և Եգիպտոսի նուաճումը։

521—486. Դարեհ Վշտասպեան՝ կեղծ Շմերդիսի կարճատև թագաւորութիւնից յետոյ՝ բարձրանում է պարսկական գահը։

518. Դարեհը ընկնում է Բաբիլացոց ապստամբութիւնը։

515. Նա արշաւում է Դանուբի ափերում թափառող Սկիւթացոց երկիրը և մեծ կորուստով վերադառնում։ Վերադարձին Դարեհի Միկաբազ զօրապետը նուաճում է Թրակիան, և Մակեդոնիան Պարսից իշխանութեան տակ է ձգում։

500. Փոքր Ասիայի Յոյների ապստամբութիւնը Պարսից տիրապետութեան դէմ։

493. Պարսից առաջին արշաւանքը դէպի Յունաստան Մարդոնիոսի հրամանատարութեամբ։

490. Պարսից երկրորդ արշաւանքը դէպի Յունաստան Դատիսի և Արտափերնեսի զօրավարութեամբ։

486—465. Դարեհի որդի և ժառանգ Քսերքսէսի թագաւորութիւնը։

480. Պարսից երրորդ արշաւանքը դէպի Յունաստան Քսերքսէսի հրամանատարութեամբ։

465—425. Արտաշէս Ա. ի թագաւորութիւնը։

449. Կիմոնեան զաշն. Յունա-Պարսկական պատերազմների դադարումն։ Փոքր Ասիայի Յոյն գաղթականութիւնքը ստանումեն անկախութիւն։

424—405. Դարեհ Բ։

405—359. Արտաշէս Բ. Ուշեղ։

359—336. Արտաշէս Գ. Ոքսոս։

336—331. Դարեհ Գ. Կոդոմանոսը։ Ալէքսանդր Մակեդոնացին նուաճում է Պարսից տէրութիւնը։

VI

Բաբելացիք և Ասորեստանցիք։

2000. Ներբովթը Բաբիլոն քաղաքի և Բաբելական տէրութեան հիմքն է դնում։

1250. Ասորեստանի Նինոս թագաւորը շինում է Տիգրիս գետի վերայ Նինուէ քաղաքը և նուաճում է Բաբելոնը, Մարաստանը և ուրիշ երկրներ։ Նինոսի կին Շամիրամը շարունակում է իւր մարդու աշխարհակալութիւնը։

800—712. Ասորեստանի թագաւորական նոր սերունդը (Բելիտարայ). Ասորոց պատերազմասէր թագաւորները դարձնումեն իրանց զէնքը դէպի արեւմուտք և նուաճումեն Ասորիքը մինչև Միջերկրական ծովը։ Փուլ, Տիգլատ Բաղդասար, Սալմանասար և Սենեքերիմ թագաւորները։

712. Մարաստանը բաժանվում է Ասորեստանից։

625. Քաղդէացի Նաբոպոլասարը դառնում է Ասորեստանից անկախ Բաբելոնի թագաւոր։

606. Բաբելաստանի Նաբոպոլասարը և Մարաց Կիաքսար թագաւորները և Պարոյր Հայոց իշխանը կործանում են Նինուէ քաղաքը։ Ասորոց տէրութեան անկումը։ Ասորոց վերջին թագաւորը։

604—561. Նաբուգոդոնոսոր թագաւորում Բաբելաստանում։

538. Կիւրոս Պարսից թագաւորը իւր դաշնակից Հայոց Տիգրան թագաւորի հետ, առնում է Բաբելոնը և նուաճում Բաբելական պետութիւնը։ Բաբելացոց Բաղտասար կամ Նաբոնէտ վերջին թագաւորը։

VII.

Յոյները։

2000 Աւանդելաքանաչեն և Դիւցազնուչեն շրջանը։

2000 Յունաստանի ամենից հին բնակիչները երկրագործ ու բնութեան զօրութիւնները պաշտող Պելասգներն էին։

1800—1100 Պելասգների տեղ յառաջ են գալիս Հելլէնները, որոնք բաժանուած էին՝ Եւոլական, Դորիական, Յոնիական և Աքայական չորս գլխաւոր ցեղերի։

1500. Սայիսցի Կիկրոպսը ստորին Եգիպտոսից գաղթում Ատտիկէ և կառուցանում Կիկրոպս ամրոցը, որի մօտ յետոյ հիմնվում Աթէնք քաղաքը։

1400. Կադմոսը Փիւնիկէից գաղթելով Բէոտիա՝ շինում Կադմիա ամրոցը, որի մօտ և հիմնվում Թեբէ քաղաքը։ Դանայոսը վերին Եգիպտոսից գաղթում Արգոլիդ։

1300. Տանտալի որդի Պելոպսը Լիդիայից գաղթում Ելիդայ։

1230. Արգոնաւորդների արշաւանքը դէպի Կողքիս ոսկէ գեղմը վերադարձնելու համար, որին մասնակցում էին Թեսալիայի Յասոնի առաջնորդութեամբ այն ժամանակուայ ամենանշանաւոր հերոսները—Հերքիւլէս, Թէսէոս, Կաստոր, Պոլլուքս, Որփէոս Պելլէոս և ուրիշները։

1220. Եօթը հերոսներ արշաւում են Թեբէն (Ատրաստ, Տիդէոս, Պոլենիկ, Կապանէոս, Ամֆիարաս, Հիպոմիդոնտ, Պարտենոպէա)։

1200. Եգիպտացիք յարձակվում են Թեբէի վերայ։ Աթենացոց հզօր տէրութեան հիմնադիր Թէսէոս թագաւորը։

1194—1184 Յոյները Միկենացոց թագաւոր Ագամեմնոնի հրամանատարութեամբ և մասնակցութեամբ Սպարտացոց, իւր եղբայր Մենելաւոս

թագաւորի, Աքիլլէսի և սորա ընկեր Թեսալիացի Պատրոկլէսի, Իթակիոյ թագաւոր Ոդիսեւսի, Արգոսացի Դիոմեդի, Սալամինացի Այաքսի, Պելոսացի Նեստորի և ուրիշ շատ նշանաւոր յոյների մասնակցութեամբ՝ ուղևորվումեն Փոքր Ասիայի Տրովադա քաղաքը նուաճելու. (Տրովադացոց Պրիամոս թագաւորը և նորա Հեկտոր և Պարիս որդիքը). տասնամեայ պաշարումից յետոյ տիրումեն քաղաքին։

1100 Դորիացիք Թեմէն, Կրիսփոնոս և Արիստոդէմ Հերակլիդների առաջնորդութեամբ և Եոոլիացի Օքսիլի մասնակցութեամբ գաղթում են Պելոպոնէս և տեղաւորվումեն՝ Արգոլիսում (Թեմէն), Լակոնիայում (Արիստոդեմի Պրոկլէս և Եւրեսթենէս որդիքը), Մեսենիայում (Կրիսֆոնտ) և Ելիսում (Օքսիլ)։

Պատմական ժամանակ։

1100—500 Ցունական գէրութիւնների և գաղութացման հաստատումը։

1068. Դորիացիք Սիկիոնը, Կորնթոսը և Մեգարիսը նուաճելուց յետոյ՝ տիրումեն Սատիկէին։ Այսպիսի արշաւանքներից մէկում Աթենացի Կոդրոսը իւր անձը զոհելով հայրենեաց՝ հարկադրում է սորանով Դորիացիներին հեռանալ։ Կոդրոսից յետոյ Աթենացիք չեն կամենում ունենալ թագաւոր. թագաւորի փոխարէն հաստատումեն Արքոնտի պաշտօնը։

1060—1040 Փոքր Ասիայի արևմտեան ափերում հիմնվումեն Եւոլական (թուով 12), Ցունական (թուով 12), Դորիական (թուով 6) գաղթականութիւնները։

950. Փոքր Ասիայի Հոմերոս երգիչը, որին վերաբերումեն Եղիականը ու Ոդիսականը։

888. Լիկուրգոսի օրէնսդրութիւնը Սպարտայում։ Այդ օրէնսդրութեամբ տէրութեան կառավարութիւնը ընկնում է երկու թագաւորների, Ծերակոյտի և սպարտիատների ազգային ժողովի վերայ։ Ժողովրդեան միւս երկու դասակարգերը պէրիէկները և հիլոտները չէին մասնակցում պետական գործերում։ Հիմնվումեն հասարակական սեղաններ (հացկերոյթ) և լաւ զինուորներ պատրաստելու նպատակով տնօրինվում պատանիների խիստ միջոցներով կրթութիւնը։

776 Ոլիմպիադի սկզբնաւորութիւնը և Ցունաց առաջին տարեթիւը։

743—724 Մեսենական առաջին պատերազմը, որով զրկվումեն Իթոմէ լեռնային ամրոցից, և հպատակումեն Սպարտացիներին։

685 —668 Քաջ Արիստոմենի դրդմամբ սկսվում է Մեսսենական երկրորդ պատերազմը և վերջանում Իրա լեռնային ամրոցի նուաճումով և ամբողջ երկիրը անցնում է Սպարտացոց ձեռքը։

624. Դրակոնի անյաջող օրէնքները Աթէնքում։

594. Աթէնքի օրէնսդիր Սոլոնը հեշտացնում է պարտապանների դրութիւնը, ժողովրդին իւր կարողութեան համաձայն չորս դասակարգի է բաժանում, տալով իւրաքանչիւր դասակարգին առանձին իրաւունքներ։ Ընթացիկ գործերի համար հաստատում է 400 անդամներից բաղկացած ժողով։ Բարձրագոյն իշխանութիւնը յանձնում է ազգային ժողովին։

560. Պիսիստրատոսը խորամանկութեամբ բռնակալում է Աթէնքին։

526. Պիսիստրատոսի մահը, նորա Հիպպիաս և Հիպպարքոս որդիքը։

514. Հարմոդիոս և Արիստոգիտոնը սպանում են Հիպպարքոսին։

510. Հիպպիասի աքսորանքը Աթէնքից և բռնակալութեան անկումն։

509. Աղկմէոնիդ Կլիսթենէսը Սոլոնի օրէնսդրութիւնը գործադրում է և նոր օրէնքներով ռամկապետական կազմակերպութեանը տալիս է

ազնուականներից աւելի վճռողական իրաւունքներ։

500—431 Յունաստանի փառքը և զօրութիւնը։ Յունաստանի քաղաքակրթութեան ծաղիկը։

500. Աթենացիք և Եղեր տրիացիք ուղարկում են մի քանի նաւեր (25) օգնութիւն պարսիկներից ապստամբուած Փոքր Ասիայի Յոյներին և այդպիսով Պարսից թագաւոր Դարեհին գրգռում են իրանց դէմ։

493. Մարդոնիոս զօրապետի անյաջող արշաւանքը ընդդէմ Յոյների Թրակեայի ափերում։ Պարսից նաւատորմիղը Աթոս հրուանդանի մօտ կործանվում։

490. Պարսից 100,000 զօրքը Դատիսի և Արտաֆերնէսի առաջնորդութեամբ անցնելով Եգեան ծովը աւերում է Էվբէա կղզու Երետրիա քաղաքը, բայց դուրս գալով Ատտիկէի արևելեան ափը՝ Մարաթոն քաղաքի մօտ՝ ջարդվում Յունաց Միլտիադէս զօրապետի հրամանատարութեան տակ գտնուած 10,000 Աթենացի և 1000 Պլատիացի զօրքերից։

484—408 Յունական պարսկական պատերազմների պատմաբան Հալիկարնասցի Հերոդոտը (Պատմութեան հայր)։

481. Պարսից Քսերքսէս թագաւորը իւր անձնա

կան հրամանատարութեամբ դալիս է Յոյնների դէմ 1,700,000 հետեւակ, 80,000 ձիաւոր զօրքերով և 1200 նաւերից բաղկացած նաւատորմիղով։

480. Լէոնիդասի դիւցազնական մահը 300 Սպարտացիների հետ միասին Թերմոպիլեան կիրճում։ Յունական նաւատորմիղը հեռանում է Արտեմիզեան հրուանդանից դէպի Սարօնիկեան ծոցը և այնտեղ Աստիկէի և Սալամին կղզու մէջ գտնուած նեղուցում՝ Սպարտացի Եվրիպիդէսի և Աթենացի Թեմիստոկլէսի հրամանատարութեամբ վճռողական հարուած է տալիս Պարսից նաւատորմղին. Քսերքսէսը փախչում է Յունաստանից։

479. Քսերքսէսի հրամանով Յունաստանում մնացած 300,000 զօրքը Մարդոնիոսի առաջնորդութեամբ նորոգում է պատերազմը յոյների հետ, բայց Պլատէայի մօտ վերջնական հարուած է ստանում Սպարտացի Պաւսանիասի և Աթենացի Արիստիդէսի հրամանատարութեան տակ գտնուած յունական միացեալ զօրքերից։ Նոյն ժամանակամիջոցին յունական նաւատորմիղը՝ Սպարտայի Լէոտիքիդէս թագաւորի և Աթենացի Քսանտիպոսի առաջնորդութեամբ Փոքր Ասիայի ափերքում՝ Միկալէ հրուանդանի

մօտ՝ ոչնչացնում է պարսկական նաւատորմղի վերջին մնացորդները։

478. Թեմիստոկլէսի խորհրդով Աթէնքը շրջապատում են պարիսպներով։

477. Արիստիդէսի առաջարկութեամբ Աթէնք բաղաքի չորրորդ դասակարգի բնակիչներին շնորհվում է իրաւունք՝ միւս երեք դասակարգերի հաւասար՝ պետական պաշտօնակատարութեան մէջ մտնելու։

476. Աթենացիք գերիշխանութեան իրաւունքը ծովի վերայ առնում են Սպարտացիներից և իրենց վերայ են ընդունում Փոքր Ասիայի յոյն գաղթականութեանց և Եգեան ծովի կղզիների պաշտպանութիւնը ընդդէմ Պարսից։

468. Ճշմարտասէր Արիստիդէսի մահը։ Միլտիադէսի որդի Կիմոնը իւր հօրից յետոյ Աթէնքի մէջ ազդեցութիւն ունեցող մարդն է դառնում։

466. Նորա հետ ի միասին և մեծ ազդեցութիւն է ունենում ռամկապետական կուսակցութեան առաջնորդ Պերիկլէսը, որ և Կիմոնից յետոյ Աթենացոց ժողովրդի միակ առաջնորդն է դառնում. նա նոր օրէնքներով Աթենական տէրութեան ռամկապետական կազմակերպութիւնը ընդլայնում է, գլխաւորապէս իւր ազդեցութիւնը զործ է դնում Աթէնքի մէջ արուես-

տը և գիտութիւնը բարգաւաճելու։ Պարթենոն Պրոպիլէներ, Ոդէոն քանդակագործ. Փիդիաս և նորա Ոլիմպեան Զեւսի արձանը։ Դրամաների ծաղկեալը՝ Եսքիլէս 456, Սոփոկլէս 405 և Եվրիպիդէս 406 (ողբերգութիւնք), Արիստոփանէս 388 (կոմեդիա)։ Կիմոնը վերջացնում է Պարսից նաւատորմիղը և ցամաքային զօրքը Եւրիմեդոն գետի վերայ՝ Պամֆիլիայում։

464—455 Մեսսենական երրորդ պատերազմը։ Մեսսենական Հիլոտները օգուտ քաղելով Սպարտայի երկրաժարշտութիւնից ամբոստանում են և նորից նուաճում Իթոմէ ամրոցը։

461. Աթենացիք օգնական զօրք են ուղարկում Սպարտացիներին, բայց վերջինները այդ զօրքը յետ ուղարկելով՝ գրգռում են Աթենացոց, որոնք և դաշն են կապում Արգոսի և Սիգարայի հետ և այդպիսով սկսում են պատերազմը Սպարտայի հետ նորանց ձեռքից նորից նոյն ցամաքի վերայ ունեցած գերիշխանութիւնը խլելու։

456. Սպարտացիք Տանագրայի մօտ յաղթում են Աթենացոց, բայց շուտով դորանից յետոյ՝ Աթենացիք վճռողական հարուած են տալիս Սպարտացոց դաշնակիցներին՝ Բէոտացիներին այգիների մօտ (Ենոֆիտա) և իւրեանց գերիշխանութեանը

հպատակեցրին Փոքիսը, Լոկրիսը և Բէոտիան։

455. Աթենացիք Իթոմէի յաղթուած բնակիչներին ապաստանարան են տալիս իրանց Նավպակտոս քաղաքում։

450. Կիմոնը իւր ոքսորանքից վերադառնալուց յետոյ հաշտեցնում է Աթենացոց ու Սպարտացոց և նորոգում արշաւանքները ընդդէմ Պարսից։

449. Կիմոնը մեռնում է Կիպրոս կղզու վերայ, բայց նորանից յետոյ մնացած զօրքը փառաւոր յաղթութիւն է անում Պարսիկների դէմ Սալամին քաղաքի մօտ (Կիպրոսի վերայ)։ Այդ ժամանակ Աթենացիք Կիմոնեան հաշտութիւնն են կապում Պարսիկների հետ, որի զօրութեամբ Պարսից թագաւորը խոստովանում է Փոքր Ասիայի Յոյների անկախութիւնը։

447. Կիմոնի մահուանից յետոյ Աթենացոց և Սպարտացոց մէջ նորոգուած պատերազմում Աթենացիք յաղթվում են Բէոտացիներից Կորոնէի մօտ։

445. Աթենացոց նոր անյաջողութիւններից յետոյ Պերիկլէսը համոզում է Սպարտացիներին հաշտուել, որև կոչվում է Պերիկլեան հաշտութիւն, որով երկու նախագահ տէրութիւնները բաժանում են իրենց մէջ Յունաստանի

գերիշխանութիւնը, թողնելով միւս երկրորդական տէրութիւններին այս կամ այն կողմը բռնելու։

434. Կոստանդիոսի և Կարկիդոնի պատերազմները Սպիրգամնոսի համար։

433. Աթենացիք դաշնիք են կապում Կարկիդոնի հետ և Կոստանդացոց սրգելք են լինում նուաճելու Կարկիդոնա կղզին։

431—362 Ռուսաստանի անկումն։

431—404 Պելոպոնեսեան պատերազմը Աթենացոց, Սպարտացոց և նոցա դաշնակիցների մէջ։

431. Սպարտացոց զօրքը Արքիդամոսի առաջնորդութեամբ մտնում է Ատտիկա։ Աթենացոց նաւատորմիղը աւերում է Պելոպոնեսի ափերը։

430. Երկու կողմերը ևս կրկնում են միմեանց վերայ յարձակումը։ Ժանտախտը Աթենքում, որտեղ և ժողովում են Ատտիկայի բնակիչները։

429. Պերիկլէսի մահը ժանտախտից։ Նորա տեղապահ յաջորդը՝ Կլէոն։

425. Աթենացի Դեմոսթենէս զօրավարը նուաճում է և ամրացնում Մեսսենական ափում գտնուած Պիլոս ամրոցը, որպէս զի այնտեղից կարողանայ պահպանել Մեսսենացոց ապստամբութիւնը ընդդէմ Սպարտայի։ Սպարտացոց կողմից ուղարկուած 420 ծանր զինաւորուած

Սպարտացիք, որոնք պէտք է տրտաբոմ՝ն Աթենա՝ ինքերին Պիլոսից՝ շրջապատումն Աթենական նաւատորմիղով Պիլոսի յանդիպում գրաւում Սֆակտերիա կղզու մօտ և գերի են առնում։

424. Սպարտացոց Բրասիդաս առաջնորդը արշաւում է Թրակիան և նուաճում այստեղի Աթենական գաղթականութիւնը, որի հետ և Ամֆիպոլիսը։ Աթենացիք մեծ հարուած են կրում Բեոտացիներից Դելիոնի մօտ (Սպարտացոց դաշնակիցք)։ այդտեղ զերծանցումն իրենց բաջութեամբ Սոկրատէսը և Ալկիբիադէսը։

422. Սպարտացիք Ամֆիպոլիսի մօտ յաղթում են Աթենացոց, երկու կողմն Բրասիդաս և Կլէոն զօրապետները ընկնում են պատերազմում։

421. Նիկիան հաշտութեամբ երկու կողմը ևս համաձայնում են 50 ամեայ հաշտութիւն անել այն պայմանով, որ փոխադարձաբար վերադարձնեն նուաճեալ երկրները և գերիները։ Թշնամական յարաբերութիւնքը շարունակվում են, բայց ոչ թէ Սպարտացոց և Աթենացոց, այլ նոցա դաշնակիցների մէջ։

415. Աթենացիք Ալկիբիադէսի, Նիկիասի և Լամաքոսի առաջնորդութեամբ արշաւում են Սի-

կիլիան նուաճելու մտքով։ Ալկիբիադէսը թողնում է զօրքը։

414. Աթենացիք շրջապատում են Սիրակուսան, Սպարտացիք Ալկիբիադէ ի խորհրդով Սիրակուսացոց օգնական զօրք են ուղարկում Գիլիպպոսի առաջնորդութեամբ։

413. Աթենացոց նուաւորիկը և զօրքը Սիրակուսայի մօտ ջարդվում են։ Աթենացոց Լամաքոս, Նիկիաս և Դեմոսթենէս զօրավարները ընկնում են պատերազմում։ Ալկիբիադէսի խորհրդով Սպարտացիք Աստվկայի Դեկելէա ամրոցը տիրապետում են։

412. Նաւատաշնակիցներ բաժանվում են Աթենացիներից։ Սպարտան Պարսիկներից օգնութիւն է ստանում։

410. Աթենացիք Կիզիկոսի մօտ վերջնական ծովային յաղթութիւն են անում և արդէն իրենց մօտ վերադարձած Ալկիբիադէսի առաջնորդութեամբ դղալի յաջողութիւններ են ցոյց տալիս ընդդէմ Սպարտացոց։

407. Ալկիբիադէսի բացակայութեան ժամանակ Լիւսանդր զօրավարը յաղթում է Աթենացոց։ Սրանից յետոյ Ալկիբիադէսը երկրորդ անգամ ստիպուած փախչում է իւր հայրենիքից։

406. Աթենացոց յաղթութիւնը Արգինուսեան

կղզիների մօտ։

405. Լիւսանդր Եգոսպոտամոսի մօտ մեծ հարուած է տալիս Աթենացոց։

404. Աթէնքի առնումը, պարիսպների կործանումն և Աթենական զօրութեան անկումը։ Սպարտայի ազդեցութեամբ Աթենքի մէջ հաստատվում են 30 բռնաւորներ։

403. Թրասիբուլոսը 30 բռնաւորի կառավարութիւնը վերցնում է և վերականգնում Սոլոնի օրէնքները։

402. Պելոպոնեսեան պատերազմի պատմաբան Աթենացի Թուկիդիդէսը։

401. Կիւրոս Կրտսերը՝ Փոքր Ասիայի կուսակալը՝ 10000 յոյների օգնութեամբ ձգտում է գահընկէց անել իւր աւագ եղբայր Արտաշէս Բ. ին։

400. Կիւրոս Կրտսերի մահը Կունաքսայի պատերազմում, 10000 յոյների նահանջը Պարսկաստանից Քսենոփոն պատմաբանի առաջնորդութեամբ (Անաբազիս)։

399. Պարսիկների՝ Փոքր Ասիայի Յոյներին ճնշելը առիթ է տալի Սուն-ապարսկական պատերազմների վերանորոգվելուն։ Սպարտական զօրքերը մտնում են Փոքր Ասիան։ Սոկրատէսի մահը. նորա աշակերտ Պլատոնի մահը 328 թ. (ձե-

մարանականներ)։

396. Ազեսիլայոս թագաւորը Փոքր Ասիայում ներգործող սպարապետական զօրաց գլուխն անցնելով մեծ յաջողութիւններով շարունակում է Պարսիկների հետ պատերազմը։

395. Պարսիկները դրդուում են Թեբացիներին, Կորնթացիներին, Արգոսցիներին և Աթենացիներին պատերազմի՝ ընդդէմ Սպարտացիների և այդ պատճառով՝

394—387 Մագում է Կորնթական պատերազմը։

394. Պարսկական նաւատորմը Աթենացի Կոնոնի առաջնորդութեամբ խլեալ ոչնչացնում է Կնիդոսի մօտ Սպարտական նաւատորմը։ Ագեզիլայոս շտապում է Փոքր Ասիայից և Կորնթոսի մօտ փառաւոր ջարդ է տալիս Սպարտայի թշնամիներին։

387. Պարսից թագաւորի առաջնորդութեամբ կայանում է Անտալկիդեան հաշտութիւնը, որով Փոքր Ասիայում և մերձակայ կղզիներում գտնուած յունական քաղաքների մեծ մասը նորից ենթարկվում է Պարսիկներին, իսկ Յունաստանում փոքր քաղաքները և հասարակապետութիւնները անկախ են համարվում նախկին տիրապետող քաղաքներից։

383. Սպարտական զօրապետ Թէբիսը իւր զօր-

բերով Մակեդոնիա գնալի՝ Թեբէի ազնուապետական կուսակցութիւնների խնդրանքով՝ ձեռք է դցում Թեբէական Կադմիա միջնաբերդը։

379. Պելոպիդասը ընկճում է Թեբէի ազնուապետականներին և աքսորում է Կադմէայից Սպարտական պահապան զօրաբաժինը, որի տեղով ծագում՝

378—362 Թեբէական պատերազմը։

371. Թեբէական Եպամինոնդաս զօրապետը Լեվկտրիայի մօտ փառաւորապէս յաղթանակում է Սպարտացիներին և ներս է մղվում՝ նոյն իւր Պելոպիդէս։

369. Թեբացիք վերականգնում են Մեսենական անկախութիւնը։ Պելոպիդասի մահը Թեսալիայի արշաւանքի ժամանակ։

362. Արկադիայում Մանտինէի մօտ եղած ճակատամարտը. Թեբացիների երկրորդ յաղթանակը և Եպամինոնդասի մահը։

361—146 Մակեդոնիայի պերապետութիւնը։

361—336 Մակեդոնիայի Փիլիպոս թագաւորը։

355—346 Թեբացիների և Փոկիդացիների առաջին սրբազան պատերազմը։

346. Փիլիպոսը օգնութիւն է հասնում Փոկիդացիներից նեղուած Թեբացիներին։ Նա մրցանում է Յունաստան, յաղթում է Փոկիդացիներին

և Ամֆիկտիոնեան դատարանում Նրանց դատակնռած երկու ձայնը՝ իրան է սեպհականացնում։

338. Երկրորդ սրբազան պատերազմը։ Ամֆիկտիոնեան դատարանը յայտնում, Լոկրիսի Ամֆիս քաղաքին պատերազմ, որին առաջնորդում Փիլիպպոսը։ Դեմոսթենէսը գրգռում Աթենացիներին ու Թերացիներին դիմադրել Փիլիպպոսին։ Բայց Քերոնէայի մօտ Մակեդոնացիք իսպառ յաղթում են յունական զօրքին։

336. Փիլիպպոսի մահը և նորա որդի Ալէքսանդրի թագաւորութիւնը։

335. Ալէքսանդր Մակեդոնացին արշաւում Թրակիան, Իլլիրիան։ Թերացիները ապստամբվում են։ Ալէքսանդրը վերադառնում, հնազանդեցնում և նրանց քաղաքը կործանում։

334. Ալէքսանդրը պարսկական պետութիւնը նուաճելու պատրաստութիւն է տեսնում։ Նա Գրանիկոս գետի մօտ յաղթում պարսից կուսակալներին և նուաճում Փոքր Ասիան։

333. Ալէքսանդրը Իսսոսի մօտ ջարդում Դարեհ Կոդոմանոսին։

332. Ալէքսանդրը նուաճում Փիւնիկիան, Պալեստինը և Եգիպտոսը։ Ալէքսանդրիա քաղաքի հիմնարկութիւնը։

331. Դարեհ Կոդոմանոսը իսպառ յաղթվում Արբէլայի մօտ։ Ալէքսանդրը տիրապետում պարսկական պետութեան Բաբելոն, Շուշ և Պերսեպոլիս գլխաւոր քաղաքներին։

330. Ալէքսանդրը հալածում յաղթուած Դարեհին Մարաստանի, Պարթևաստանի և Գիրկանիայի միջով։ Այս վերջին նահանգի և Բագտրիայի սահմանում Բէս կուսակալի հրամանով սպանվում։ Ալէքսանդրը պատժում Բէսին։ Նուաճում զարսկական պետութեան Հիւսիս—Արևելեան ազգերը։ Պատերազմում Հայկազանց վերջին թագաւոր Վահէի հետ, սպանում նորան և իշխում Հայաստանին։

327. Ալէքսանդրը արշաւում Հնդկաստան (Պօր և Տաքսիլ բնիկ թագաւորները)։ Նա հասնում Ինդոս գետի արևելեան Հիւփասիս վտակին, բայց զօրքերի տրտունջը հարկադրում նորան վերադառնալ։

326. Շուշ քաղաք վերադառնալը մի մասը ծովով, մասն էլ ցամաքով. Ալէքսանդրի Նեարքոս զօրավարը գտնում Ինդոսի գետաբերանից դէպի Տիգրիսի գետաբերանը նոր ճանապարհ։

323. Ալէքսանդր Մեծը մեռնում Բաբելոնում։ Ալէքսանդրեան համաշխարհային կայսերութեան զանազան մասերին տիրապետելու և գերիշխանութեան համար վէճ է ծագում,

Նորա զօրապետների մէջ (Պերդիկկաս, Անտիպատրոս, Անտիգոնոս, Եւմենէս, Լիւսիմաքոս, Պտողոմէոս և Սելևկոս). Անտիպատրոսը տիրում Մակեդոնիային. Անտիգոնոսը՝ Լիկիային, Պամփիլիային և Փրիւգիային. Եւմենէսը՝ Կապադովկիային. Լիւսիմաքոսը՝ Թրակիային, Պտողոմէոսը Եգիպտոսին, Սելևկոսը Բաբելոնին։ Պերդիկկասը իբրև հոգաբարձու Ալէքսանդրի փոքրահասակ ժառանգներին՝ ձեռք է բերում միւս զօրապետներից առաջնակարգութիւնը։

322. Յոյները Աթենացոց դրդմամբ ապստամբվում են Մակեդոնացոց դէմ։ Անտիպատրոսը յաղթվում և հարկադրվում պատսպարվել Լամեայ տմրոցի մէջ (Լամեան պատերազմը)։

322. Ալէքսանդր Մեծի դաստիարակ Արիստոտել փիլիսոփան հիմնում Պերիպատիկեան դպրոցը։

321. Ասիայից եկած Մակեդոնական զօրքերի աջակցութեամբ՝ Անտիպատրոսը հնազանդեցնում Յոյներին։ Մահուան դատապարտուած Դեմոսթենէսը փախչում Աթենքից, բայց երբ Նորա եռևից ուղարկուած Մակեդոնական զօրքերը վրա են հասնում՝ նա Կալաբրիա կղզու վերայ՝ ինքն իրան սպանում։ Պերդիկկասը սպանվում, իւր զէնուորներից։ Անտիգոնոսը տարածում, իւր տիրապետութիւնը բոլոր առաջաւոր Ասիայի վերայ։

306. Անտիգոնոսը ձգտելով վերականգնել Ալէքսանդրի միապետութիւնը՝ ընդդիմադրութիւն է գտնում միւս զօրապետների կողմից։ Նորա որդի Դեմետրիոս Պոլիորկետէսը Պտողոմէի նաւատորմիղը Սալամինի մօտ, Կիպրոս կղզու վերայ, յաղթելուց յետոյ, Անտիգոնոսը ընդունում արքայական տիտղոս։ Նորա թրիմակին հետևում են Սելևկոսը, Պտողոմէոսը, Կասանդրը և Լիւսիմաքոսը։

301. Սելևկոսը և Լիւսիմաքոսը Իպսոսի արիւնահեղ պատերազմում ջարդվում Անտիգոնոսին և Դեմետրիոս Պոլիորկետէսին, որոնցից առաջինը մեռնում, իսկ երկրորդը փախչում պատերազմի գաշտից. Ալէքսանդրի պետութիւնը քայքայվում։

280. Յունաստանի Աքայական դաշնակցութեան հիմնարկութիւնը և հետզհետէ զօրանալը։

242. Սպարտական Ագիս Գ. թագաւորը ձգտում վերականգնել Լիկուրգոսի հաստատութիւնները. չէ յաջողվում մեռնում իւր հակառակորդներից։

215—205 Մակեդոնիայի Փիլիպպոս Ե. թագաւորի և Հռոմայեցոց մէջ ծագած առաջին պատերազմը։ Եռօրացիք դաշնակցում են Հռոմայե-

ցոց, իսկ Աքայեցիք՝ Փիլիպպոսին։

200—197 Մակեդոնական երկրորդ պատերազմը Հռոմայեցոց հետ։

171—168 Մակեդոնական Երրորդ պատերազմը Փիլիպպոսի որդի և յաջորդ Պերսէոսի և Հռոմայեցոց հետ։

167. 1000 նշանաւոր Աքայեցիք գերի են ընկնում Հռոմայեցոց ձեռքը։

148. Մակեդոնիան՝ Հռոմէական նահանգ։

146. Աքայեցիք ապստամբվումեն Հռոմայեցոց դէմ, բայց ջարդվումեն։ Դաշնակցութեան գլխաւոր քաղաքը կործանումէ Մումիոս զօրապետը և Յունասանը դառնումէ Հռոմէական նահանգ Աքայիա անունով։

VIII.

Հռոմայեցիք։

Իտալիայի գլխաւոր ազգերը հռոմէական պէրուլեան սիրէնաւորութեան տակ՝

1. Եռուրացիք 12 քաղաքներից դաշնակցութիւն են կազմում. սրանց քաղաքակրթութեան և արհեստների յիշատակարանները։

2. Լատինացիք Ալբալոնգայ քաղաքի գերիշխանութեամբ 30 քաղաքներից դաշնակցութիւն են կազմում։

3. Սաբելացիք բաժանուած են մի քանի անկախ ցեղերի (Սաբինացիք և Սամնիտացիք) և զանազանվում են միւսներից իրանց նահապետական սովորութիւններով։

753—510. Հռոմէական պէրուլեան սիրէնական կազմակերպութիւնը Լուգաւորների ժամանակ։

753—716. Հռոմուլոսը հիմնումէ Հռոմ քաղաքը։ Քաղաքի բազմամարդանալը։ Ներքին կազմակերպութիւնը։ Մերակոյտի հիմնարկութիւնը. Կուրիատեան ու Պատրիկեան ժողովները. հեծելազօրները։

717—672. Հռոմէական պատրիկները ընտրումեն Նումա Պոմպիլիոսին թագաւոր, որ հաստատումէ կրօնական ծիսակատարութիւններ և քրմական դասակարգութիւններ — Ֆլամիններ (վառողներ), Աւգուրներ (թռչնագուշակ), Ֆեցիալներ (ազգարար), պօնտիֆէկներ (ծիսապահ)։

672—640. Տուլլիոս Ոստիլիոսը նուաճումէ Ալբալոնգան. Ովիատեանք և Կուրատեանք։

640—616. Անկոս Մարկիոսը վերականգնումէ կրոնական մոռացուած ծէսերը. սկսումէ Լատինացոց նուաճումը։ Հիմնումէ Ոստիա նաւա-

հանգիստը, հռոմ.ական ռամիկ դասակարգը (plebes). կանգնումէ սենատամուրջը Տիբերիս գետի վերայ։

616—578. Տարկվինիոս Սրէց— վերջացնումէ լատինական նուաճումը, զարգարումէ Հռոմը հարուստ և ամուր շէնքերով։ (Հրապարակ, կրկէս, կոյուղներ, ջրմուղներ) Հռոմը դարձնումէ գլուխ լատինական դաշնակցութեան։

578—535. Սերվիոս Տուլլիոս առաջինն է, որ տալիս է պլեբէյներին մի քանի իրաւունքներ, բաժանելով բոլոր քաղաքացիներին իրանց կարողութեան համաձայն՝ 6 դասակարգերի և 193 հարիւրեակների (centuria) և սրանց համեմատ էլ որոշումէ իւրաքանչիւրի պարտքը և իրաւունքը։

534—510. Տարկվինիոս Գոռողը ցանկանալով իւր իշխանութիւնը բարձրացնել՝ խիստ մէջոցներ է ձեռք առնում պատրիկների դէմ. զրկվումէ գահից և աքսորվում։ Առաջին հիւպատոսները՝ Երիտասարդ Բրուտոս և Կոլլատինոս։

510—264. Հռոմի պիրապետութիւնը Իտալիայի վերայ և հասարակապետական կազմվելիութիւնը։

510. Երկու պատրիկ հիւպատոսների ընտրութեամբ հիմնվումէ հասարակապետութիւնը օրէնստու Ծերակոյտի հսկողութեամբ և յանձնվումէ

նրանց ղեկավարական և գործադրող իշխանութիւնը։

509. Ցոգուա Տարկվինիոսի կազմվումէ մի անյաջող դաւաճանութիւն։

507. Սորուսկեան Պորսէնա թագաւորը ցանկանալով վերականգնել Տարկվինիոսի իշխանութիւնը՝ պաշարումէ Հռոմը։ Ովրատիոս Կոկլէսի և Մուկիոս Սկեվոլայի քաջագործութիւնները։

496. Տարկվինիոսը վերջին անգամ փորձումէ Լատինացոց օգնութեամբ կառավարութեան գլուխը անցնել—չէ յաջողվում։ Այդ ժամանակ սահմանվումէ իշխանապետի (dictator) պաշտօնը։ Հռոմայեցոց յաղթանակը Հռիգէլլոն լճի մօտ։

494. Պլեբէյները ապստամբվումեն և քաշվում Սրբազան լեռը։ Սահմանվում. ժողովրդական ցեղապետների (tribunus) պաշտօնը. (veto)։

491. Կայոս Մարկիոս Կորիոլանոսը օգուտ քաղելով Հռոմում պատահած սովից՝ ձգտումէ ոչնչացնել տրիբունների իրաւունքը, չէ յաջողվում նա և աքսորվումէ։

488. Վոլսկերը պաշարումեն Հռոմը Կորիոլանոսի առաջնորդութեամբ. նա հեռանումէ զինջանելով մեր աղաչանքներին։

486—473. Պլեբէյները ձգտումեն հասարակական

ազարակներից մեն ունենալ։ Այդ հարցը զարթեցնող Սպուրիոս Կասսիոս հիւպատոսը և պլեբէյներին պաշտպանող Ֆաբիեան պատրիկ ազգատոհմը ենթարկվումեն պատրիկների հալածանքներին։

462. Պլեբէյները բոլոր քաղաքացիների համար օրէնքներ են պահանջում։ Տրիբուն Տերենտիլլիոս Արսայի առաջարկութիւնները։

454. Երեք պատրիկների դեսպանութիւն Յունաստան՝ տեղական օրէնսդրութիւնները ուսումնասիրելու։

452. Տասնապետները 12 օրինաստեղծներով հրատարակումեն գրաւոր օրէնքներ և այդպիսով Հռոմի երկու դասակարգերի իրաւունքները միացնումեն։

445. Տրիբուն Կանուլէոսի օրէնքը պատրիկների և Պլեբէյների ամուսնական հարցի վերաբերութեամբ։ Պլեբէյները զինուորական տրիբուններին պաշտօն են ընդունում։

443. Պատրիկներից ընտրվումեն երկու համարակալներ (censor), որոց պարտականութիւնն էր՝ գնահատել քաղաքացիների կայքը, հսկել նրանց վարքի ու բարքի վերայ և կառավարել տէրութեան գանձարանը։

395. Մարկոս Կամելլոսը վերջնականապէս նուաճում է Վէյի քաղաքը։

389. Գալլերը արշաւումեն Հռոմը։ Ալլիա գետի մօտ եղած ճակատը. Հռոմի կրծանումը. Կապիտոլիոնի պաշարումը։ Կամիլլոս ապաստանում է Գալլերին։

389—376. Պատրիկները ձգտումեն օգուտ քաղել Պլեբէյների աղքատ դրութիւնից։ Օրէնքների խստութիւնը պարտքերի մասին։

376—366. Պլեբէյներին օգնութեան է հասնում Մանլիոս Կապիտոլինեանը, որ մեռնում է պատրիկների հետ ունեցած ճակատամարտում, յետոյ Կայոս Լիկինիոս Ստոլոն և Լուկիոս Սեքստոսիոս Լատերանոս, որոնք առաջարկումեն ընտրել Պլեբէյներից մի հիւպատոս և թոյլատրել նրանց շահվել հասարակական ագարակներից։ Պատրիկների ընդդիմադրութիւնը և Լիկինիոսի ագրարային օրէնքների ընդունելութիւնը։

366—302. Պլեբէյների և պատրիկների իրաւունքների հաւասարութիւնը։

343—341. Սամնիական առաջին պատերազմը Կապուայի Հռոմին անձնատուր լինելու պատճառաւ։ Հռոմը հրաժարվումէ Կապուայից Լատինացոց ապստամբութեան պատճառաւ։

340—338. Լատինացիք պահանջումեն համահաւ-

սասար իրաւունք Հռոմի քաղաքացիների՝ հետ Մանլիոս Տորկվատոսի հմտութեամբ և Դեկիոս Մուսի անձնազոհութեամբ նուաճվում Լատինացոց ապստամբութիւնը։

326—305. Սամնիական երկրորդ պատերազմը։ Սամնիացոց յաղթանակը Կաուդինեան կրճի մէջ։ Հռոմայեցիք շուտով զօրեղանում են և իրանց յաղթութիւններով՝ հարկադրում նրանց հաշտուել։

299—290. Սամնիական երրորդ պատերազմը դաշնակցութեամբ Ետրուսկացոց, Գալլերի և Ումբրիացոց ընդդէմ Հռոմայեցոց։ Սենտինեմի ճակատը Ֆաբիոս Մաքսիմոսի զօրավարութեամբ։

280—272. Տարենտացիք օգնութիւն են կանչում Եպիրոսի Պիւռոս թագաւորին, որ ջարդում Հռոմայեցոց Հերակլիայի և Աշկուլոնի մօտ։ Բենեվենտի պատերազմը, որից յետոյ հարաւային Իտալիան ենթարկվում Հռոմի տիրապետութեանը։

264—146. Հռոմը իւր փառաց և զօրութեան ամենամեծ շրջանում։

264—241. Կարթագոնացիք տիրում են Մամերտացոց Մեսսենայ քաղաքին, որից և ծագում Փունիկեան առաջին պատերազմը։

260. Հռոմայեցիք երկու ամսուայ մէջ պատրաստում են նաւատորմ և հիւպատոս Դուիլիոսի առաջնորդութեամբ՝ Վիպարեան կղզիների մօտ Կարթագոնացիներին փառաւոր ջարդ են տալիս։

255. Հռոմայեցիք Հնգուլոսի առաջնորդութեամբ անցնում են Աֆրիկէ։ բայց Կարթագոնացիք յունական վարձկան զօրքի օգնութեամբ՝ Սպարտացի Քսանթիպպոսի հրամանատարութեամբ՝ ջարդում նրանց։

247—241. Հռոմայեցիք 200 նաւերից բաղկացած մի նաւատորմ են կազմակերպում և Սիկիլիան կղզիների մօտ արած յաղթութիւնից յետոյ՝ տիրում Սիկիլիայում գտնուած վերջին ամրոցներին, որոնց 6 տարի քաջութեամբ պահպանում էր Համիլկար Բարկաս։ Կարթագոնացիք ձեռք են վերցնում Սիկիլիայից և վճարում են Հռոմայեցոց 3200 տաղանդ պատերազմական ծախք։

238. Հռոմայեցիք նուաճում են Կորսիկան և Սարդինիան, որոնք Սիկիլիայի հետ միասին Հռոմէական նոահանդ անուանուելան և կառավարվում են Փոխ—հիւպատոսներով։

226—222. Գալլերը ապստամբվում են, բայց Թելամոնի մօտ յաղթվում Հռոմայեցիներից։

218—201. Կարթագոնացիք Անիբալի առաջնորդութեամբ աւերում են Հռոմի դաշնակից՝ Յուս-

նայ գաղթական Սագունդոն քաղաքը։

218. Աննիբալը Սպանիայից Ալպեան լեռներով անցնելով Իտալիա և Տիկինոս գետի մօտ ջարդում Սկիպիոն՝ և Տրիբի մօտ Սեմպրոնիոս հիւպատոսներին։

217. Տրասիմինեան լճի մօտ Աննիբալը յաղթում Ֆլամինիոս զօրապետին։ Հռոմը մնում անպաշտպան։

217—216. Ֆաբիոս Դանդաղկոսի իշխանապետութիւնը. Ֆաբիոս իւր դադար գործունէութեամբ վնասում Աննիբալի զօրքերին և մինչև անգամ լեռնակրճերում որոգայթի մէջ է գցում նորան։

216. Կաննայի ճակատում Աննիբալը բաջաբար յաղթում Տերենտիոս Վարրոնին և Եմիլիոս Պաւլոսին։ 50000 Հռոմայեցոց անկումը։

212. Հռոմայեցոց Մարկելլոս հիւպատոսը կործանում Կարթեդոնացոց դաշնակից Սիրակուսայ քաղաքը, ուր և զոհվում հռչակաւոր մաթեմատիկոս Արքիմէդը։

209—207. Ասդրուբալը Սպանիայից Ալպեան լեռներով ճանապարհում Իտալիա իւր եղբայր Աննիբալին օգնելու. բայց Մետավրոս գետի մօտ՝ պատերազմելով Հռոմէական Կլաւդիոս Ներոն հիւպատոսի հետ՝ սպանվում։

202. Սկիպիոն Աֆրիկացին Զամա քաղաքի մօտ յաղթում Աննիբալին, որով և Կարթեդոնայի՝ հարկադրվում են այրել իրանց նաւատորմիղը, վճարել Հռոմայեցիներին 10000 տաղանդ պատերազմական ծախս և առանց Հռոմի թոյլատրութեան ոչ ոքի հետ չպատերազմել։

197. Կինոսկեֆալի մօտ Հռոմայեցիք յաղթում են Փիլիպպոս Բ.ի հրամանատարութեան տակ գտնուած Մակեդոնացոց։ Նոքա հարկադրվում են ձեռք վերցնել Մակեդոնիայից դուրս գտնուած իրանց տիրապետութիւններից։

168. Պիդնայի մօտ Հռոմայեցիք ջարդում են Մակեդոնիայի թագաւոր Պերսէյին, որից յետոյ Մակեդոնիան բաժանվում 4 հասարակապետութիւնների Հռոմայեցոց իշխանութեան տակ։

148. Հռոմայեցոց Մետելլոս զօրապետը վերջնականապէս նուաճում Մակեդոնիան և դարձնում նորան Հռոմէական նահանգ։

146. Մետելլոս և Մումմիոս զօրապետները ջարդում են Աքայացիներին, կործանում Կորընթոսը և Ցունասանք դարձնում Հռոմէական նահանգ Աքայիա անունով։

149—146. Կարթեդոնացիք առանց Հռոմի թոյլատրութեան յայտնում են Նումիդիայի Մասինիսայ թագաւորին պատերազմ. ուստի և ծա-

գումէ Փիւնիկեան Նրրորդ պատերազմը։ Հռոմայեցիք երկու տարի պաշարումեն Կարթեգոնը և Սկիպիոն Եմիլիանոսի առաջնորդութեամբ առնումեն քաղաքը և աւերումեն։

164—30. Հռոմէական հաստաբանպետութեան անկումը և վերածմանը։

133. Սկիպիոն Եմիլիանոսի վերջնական յաղթանակը Սպանիայում (Նումանտիան անձնատուր է լինում)։

133. Պերգամեան Առտալոս թագաւորը կատարում է իւր թագաւորութիւնը Հռոմին։ Նորա մահից յետոյ հպատակները ապստամբվումեն Հռոմի դէմ՝ բայց յաղթվում։ (130)

133. Հռոմում ծագումեն երկու կուսակցութիւն՝ օպտիմատների (հարուստների) և պրոլետարիաների (աղքատների), որոնք պատճառ լինելով թշնամանքների ու տնհամաձայնութիւնների՝ տեղիք են տալիս տրիբուն Տիբերիոս Գրակքոսին Նորոգել Լիկինիոսի ագարակային մոռացուած օրէնքները։ Օրէնքները ընդունվումեն, բայց Օպտիմատները Սենատոր Սկիպիոն Նազիկի առաջնորդութեամբ՝ մեղադրումեն Գրակքոսին՝ իբրև տերութեան դաւաճանի՝ և սպանումեն։

121. Կայոս Գրակքոսը կրկնում է իւր եղբօր պա-

հանջը ագարակային օրէնքների մասին, աւելացնելով որ աղքատներին բաժանվի հաց արժան գնով և դատաւորներ ընտրվեն ոչ միայն սենատականներից, այլև ձիաւորներից։ Բայց դա էլ է մեղադրվում ժողովրդեանը գրգռելում և Կայոսը սպանվում։

112—106. Նումիդիայի Յուգուրտայ թագաւորի հետ եղած պատերազմը։ Յուգուրտան գերի է ընկնում և մեռնում։ Այս ժամանակ հրդեհում է Մարիոսի պատերազմը։

113—101. Հիւսիսային Իտալիան արշաւումեն Կիմբրներն ու Տեւտոնները, որոնց Ակուա—Սէքստայի և Վերկելլէյի մօտ ջարդում է Մարիոսը։

90—88. Իտալական նուաճուած ազգերը հռոմէական քաղաքացիութեան հաւասար իրաւունք են պահանջում։ Մագում է դաշնաւորների պատերազմը։ Սիլլայի քաջագործութիւնները։ Հռոմայեցիք տալիս են առաջուանից աւելի իրաւունքներ։

88. Պոնտոսի թագաւոր Միհրդատ Զ. ցանկանալով տիրապետել ամբողջ Փոքր Ասիային՝ կոտորում է 80000 հռոմայեցիք։

86. Սիլլայի առաջնորդութեամբ ազնուականների կուսակցութիւնը կռվում է ռամկապետական կուսակցութեան Մարիոս ու Կին-

նա պարտադրելիների հետ։ Մարիոսի եօթնեերորդ հիւպատոսութիւնը։

84. Սիլլան յաղթում Միհրդատին և Փոքր Ասիայի նահանգների ապստամբութիւնը խաղաղացնում։

83—79. Հռոմի կուսակցութիւնների նոր կռիւները. ազնուապետականները յաղթում և հալածումն ռամկապետականներին։ Սիլլան մի շանջենաւոր դիկտատոր է ընտրվում։

72. Ազնուապետականների հրամանատար Պոմպէոսը յաղթում Սպանիայում Հռոմէացի ռամկապետականներին դաշնակցող Լուսիտացիներին Սիլտորիայի առաջնորդութեամբ։

71. Գլադիատոր (սուսերամարտիկ) Սպարտակի առաջնորդութեամբ ապստամբվումն հռոմէացի ստրուկները։ Սիլլայ գեռի մօտ ջարդում դրանց Կրասոսը և նրանց խիստ պատժումն (6000 հոգու խաչումն)։

72. Լիկինիոս Լուկուլլոսը Կարերի մօտ յաղթում երկրորդ անգամ ապստամբվող Միհրդատին, որը փախչում իւր փեսայ Տիգրանի՝ Հայոց թագաւորի մօտ։

69. Լուկուլլոսը յաղթում Տիգրանակերտի մօտ Տիգրանին։

66. Պոմպէոսը Նէրատի մօտ Միհրդատին յաղթելով՝ նուաճում Փոքր Ասիան։

63—62. Հռչակաւոր հռետոր Կիկերոնը փրկում Հռոմը Կատիլինայի դաւաճանութիւնից, որ ձգտում վայր գցել հասարակապետական կազմակերպութիւնը և իւր ձեռքն առնել իշխանութիւնը։

60. Կնէյոս Պոմպէյոս, Կայոս Յուլիոս Կեսար և Մարկոս Լիկինիոս Կրասոսս՝ առաջին եռապետներ։

58—50. Կեսարի պատերազմը Գալլիայում, որին դարձնում Հռոմէական նահանգ։

49—48. Կեսարի պատերազմը Պոմպէոսի հետ, որ յաղթուեց Ֆարսալի մօտ։ Պոմպէոսը մեռնում Եգիպտոսի Պտղոմէոս թագաւորի ձեռքով։

48—44. Կեսարի պատերազմը Փառնակէս Պոնտացու դէմ (veni, vidi, vici), նորա պատերազմը Պոմպէյեան հասարակապետականների դէմ Նումիդիայում և Սպանիայում և նորա յաղթութիւնները։ Կեսարի իշխանապետութիւնը։ Կեսարը մի քանի քաղաքների տալիս է հռոմէական քաղաքացիութեան իրաւունք թեթևացնում, Պրոլետարների վիճակը. հրատարակում Յուլեան տոմար։ Բայց ռամկապետականները դաւաճանութեամբ սպանումն նորան։

43. Կայոս Մարկոս Անտոնիոս, Կայոս Յուլիոս Օկտավիանոս և Մարկոս Եմիլիոս Լէպիդոս՝ երկրորդ եռապետ-

ները (triumviri rei publicae constituendae)։

42. Մակեդոնիայի Փիլիպպէ քաղաքի մօտ հռապետները յաղթումեն հասարակապետականներին, որոնց պարագլուխներն էին Բրուտոս և Կասսիոս։

31. Ակտաւիանոսը Ակցիումի մօտ յաղթումէ Անտոնիոսին և Կլեոպատրային, որոնք փախչումեն Եգիպտոս և այնտեղ ինքնասպանութեամբ մեռնում։

Ն.Ք.Ա. Ց.Ք.Ա.

30—476. Հռոմէական էյսպուլիկէն։

30. Եգիպտոսը դառնում է Հռոմէական նահանգ։ Ակտաւիանոս Օգոստոսը միապետական իշխանութեան սկիզբն է դնում և կայսր անուանվում և կենդրոնացնում է իւր ձեռքում թէ հասարակապետութեան ամենաբարձր պաշտօնները և թէ զինուորական բոլոր ոյժերը։

Հռոմէական դրականութեան ոսկէ դարը, որի ներկայացուցիչներն են՝ հռետոր և փիլիսոփայ Մարկոս Տուլլիոս Կիկերոն. պատմաբաններ՝ Կեսար (գալլական ու ներքին պատերազմներ) Սալլուստիոս (Յուգուրթայի պատերազմը և Կատիլինայի դաւաճանութիւնը)։ Օգոստոսի ժամանակակից պատմաբան Տիտոս Լիվիոս (Հռոմի պատմութիւնը 99 թիւ. Ք. Ծ. առաջ) Բանաստեղծներ՝ Վիրգիլիոս (Էնէական), Ովիդիոս

(երգիծարանութիւն և ներբողներ) և Օվիդիոս (Մետամորֆոզներ)։

1. Յիսուս Քրիստոսի ծնունդը։

Ց.Ք.Ա.

9. Գերմանական ցեղերը ապստամբվումեն Արմենիոսի առաջնորդութեամբ. Հռոմէական զօրագնդերը ջարդվումեն Տեւտոբուրգեան անտառում, որից յետոյ հռոմայեցիք կորցնումեն Գերմանիայի վերայ ունեցած իշխանութիւնը։

14—37. Օգոստոսի յաջորդ Տիբերիոսը։ Աղնուապետականները ձգտումեն ձեռք բերել իրանց հնախին իրաւունքները, ուստի և Տիբերիոսը կասկածոտ բնաւորութիւն ստանալով՝ հրատարակում է օրէնք, որով պատժվումեն կայսեր անպատուողները։ Շատ ազգականներ ու աղնուապետականներ դատապարտվումեն։

37—54. Կալիգուլա և Կլաւդիոս կայսրները գերազանցումեն իրանց կասկածոտութեամբ և բռնաւորութեամբ։

54—68. Ներոնը իւր բռնակալութեամբ գերազանցում է իւր բոլոր նախորդներին. սպանում է իւր մօրը, իւր ուսուցիչ Սենեկային։ հալածում է քրիստոնեաներին. հրձվում, տեսնելով Հռոմի սարսափելի հրդեհը։ Հռոմայեցիների լեգիոնների ապստամբութիւնից սարսռած անձ-

նասպանութիւն է գործում։

68—70. Շփոթութիւն Հռոմէական պետութեան մէջ. զանազան զօրապետներից ընտրվումեն կայսրներ (Գալբա, Օտոն, Վիտելիոս)։

70. Հրէաները ապստամբվումեն՝ Հռոմէական բըռնակալ կառավարիչներից դրդռուած. Վեսպասիանոս խաղաղեցնում է նրանց։ Տիտոսը կործանում Երուսաղէմը։

70—81. Տիտոս Ֆլավիոս Վեսպասիանոսը խիստ օրինապահ կարգաւորութեամբ և խելամտութեամբ՝ կառավարում Հռոմը։ Իւր բարութեան պատճառաւ համարվում «մարդկային ցեղի մխիթարիչ»։ Նորա ժամանակ Հռոմում ծագում ժանտախտ և հրդեհ, Վեզուվը վիժում և կործանում Հերկուլանոն, Պոմպէա և Ստաբիոս քաղաքները։

81—96. Դաժան և գոռոզ Դոմիտիկիանոսը իրան Աստուած անուանելով հալածում քրիստոնեաներին։

98—117. Տրայանոսը իւր ներքին կառավարութեան պատճառաւ «ամենալաւ» է համարվում։ Նուաճում Դակիան։ Պատերազմելով Հայոց Արտաշէս Ա. ընտաց յաղթողի հետ՝ հարկատու է դարձնում Հայաստանը և Միջագետքը։ Գրականութեան արծաթեայ դարը, Իւվենալ

(երգիծաբան), Տակիտոս (պատմաբան), Պլինիոս (ուսուցիչ պերճախօսութեան)։

117—138. Ադրիանոս զբաղվում բացառապէս տէրութեան ներքին կառավարութեամբ, անձամբ ճանապարհորդում գաւառները, ժողովում և հրատարակում պրէտորական նախկին օրէնքները։ Դորա ժամանակ հրէաները ապստամբվումեն, յաղթվում և ցիր ու ցան լինում։

138—161. Անտոնիոս Պիոս կայսրը և Հռոմէական տէրութեան խաղաղ դրութիւնը։

161—180. Մարկոս Ավրելիոս իմաստասէրը։ Սադիմոդրում Գերմանական ցեղերի ապստամբութիւններին և յաղթում (Մարկոմաններ)։

180—192. Բռնաւոր և բիրտ Կոմմոդոս կայսրը կայսերական կոչումը ստորացնելով՝ մանակցում սուսերամարտիկների խաղերին. սպանվում իւր մերձաւորներից։

192—285. Զինուորների տիրապետութեան շրջանը. Զինուորները կաշառներով բարձրացնում ու զահընկեց են անում կայսրներին, այնպէս որ սրանցից շատերը իշխումեն միևնոյն ժամանակ (20) և բոլորն էլ՝ բացի Սեպտիմիոսից (193—211) և Ալէքսանդրից (225—232), Սեվերից և Աւրելիանոսից (270—275) Հռոմէական պետութեան համար յիշատակի արժ-

ժանի ոչ մի ծառայութիւն չեն անում։ Այս չփոթութիւններից օգուտ քաղելով՝ անարգել յարձակվումեն Հռոմէական պետութեան վերայ։

226. Պարթևական տէրութեան փոխարէն պարսկական նոր տէրութիւն է հաստատվում (Սասանական ցեղ) և Հայոց Խոսրով Մեծ թագաւորի որդի Տրդատը փախչում է Հռոմ։

285—305. Դիոկլէտիանոս Կայսրը իւր հաստատամիտ բնաւորութեամբ և եռանդով դադարեցնում է ներքին խռովութիւնները և այդ լայնատարած տէրութիւնը հեշտ կառավարելու համար՝ բաժանում է չորս կառավարիչների վերայ, որոնցից երկու երէցները անուանվումեն օգոստոսներ, իսկ երկու կրտսերները՝ կեսարներ (Մաքսիմիանոս արևմուտքում, Գալերիոս Բալկանեան թերակղզու վերայ, Կոստանդիոս Քլորոս Գալլիայում, Բրիտանիայում և Սպանիայում. իսկ ինքը Դիոկլէտիանոսը արևելքում)։ Նա աթոռը տեղափոխում է Նիկոմիդիա, ուր տպահով լինելով Հռոմի հասարակապետական ղօրեղ կուսակցութիւններից՝ աստուածացնում է իրան և խոյր է կրում (դիադէմ)։

312. Կոստանդիոս Քլորոսի որդի՝ Գալլիայի կեսար Կոստանդիանոսը Մաքսենտիոսին յաղթելով՝ նորից միացնում է իւր իշխանութեան տակ

Հռոմէական կայսերութեան արևմտեան բոլոր նահանգները։

313. Կոստանդիանոսի Միլանեան հրովարտակով՝ թոյլ է տրվում տէրութեան մէջ քրիստոնէական կրօնը ազատ տարածվել։

324—337. Կոստանդիանոսը յաղթում արևելեան կառավարիչ Լիկինիոսին և իւր իշխանութեան տակ միացնում Հռոմէական ամբողջ պետութիւնը։ Կոստանդնուպոլիսը դարձնում իւր աթոռանիստ քաղաք. կայսրութիւնը բաժանում չորս կուսակալութիւնների. կուսակալութիւնները նահանգների և նահանգները՝ գաւառների, Քրիստոնէական կրօնը դարձնում պետական կրօն և կայսերներից առաջինն է, որ մկրտվում է քրիստոնեայ։

325. Նիկիայի հանրական տուաջին ժողովը (Արիոսի դէմ)։

361—363. Յուլիանոս ուրացեալը ցանկանում է վերականգնել հեթանոսական կրօնը. բայց պարսիկների հետ պատերազմելիս սպանվում է։

376. Ազգերի մեծ գաղթականութեան սկիզբը (Հոններ)։

379—395. Թէոդոս Մեծը և քրիստոնէական կրօնի յաղթանակը հեթանոսականի դէմ

395. Հռոմէական կայսերութիւնը Թէոդոսի որդի-

ների մէջ երկու մասն է բաժանվում՝ Արևմտեան և Արևելեան։ Արկադիոսը իշխում է Արևելքում, Ոնորիոսը արևմուտքում։

410. Վեստ Գոտների առաջնորդ Ալարիկոսը յարձակվում է Իտալիայի վերայ և կողոպտում է Հռոմը։

429. Վանդալները Գենսերիկոսի առաջնորդութեամբ հիմնում են Ափրիկայում Վանդալական թագաւորութիւն։

451. Հռոմէացոց վերջին զօրապետ Աէտիոսը Կատալոնեան դաշտերում ջարդում է արևմտեան կայսրութիւնը արշաւող Հունների առաջնորդ Ատտիլային։ Սոյն միջոցում Հայաստանում՝ Տըղմուտ գետի ափերում՝ Աւարայրի դաշտի վերայ՝ Վարդան Մամիկոնեան քաջ սպարապետը ճակատում էր կրօնի և ազգութեան համար Պարսից Մուշկան Նիսալաւուրտի հրամանատարութեան տակ գտնուած պարսկական զօրաց դէմ։

476. Հռոմէացոց Հռոմուլոս Աւգոստուլոս կայսրը գահընկէց է լինում և Իտալիայում՝ Գերմանական վարձկան զօրաց առաջնորդ Ոդոակըր՝ հիմնում է Հերուլեան թագաւորութիւնը։

Հռոմէական արևմտեան պետութեան անկումը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՄՈՒՆ ՍՍՀԱ
ՀԱՅ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

115
2713